ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղարդ համայնք,
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Գեղարդ, 3 փող. 2, Հեռ. 077-70-84-06 ,
geghard.kotayq@mta.gov.am

N 25
08 փետրվար 2019թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի պահանջների համաձայն՝ Ձեզ է ուղարկվում Գեղարդ համայնքի ղեկավարի որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՆԱՍԱՐ ԹԱՌՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղարդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղարդ, 077-70-84-06, geghard.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հունվարի 2018թվականի N 01-Ա

ՍԱՆԱՍԱՐ ԵՐՎԱՆԴԻ ԹԱՌՈՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղարդ համայնքի ղեկավար Սանասար Երվանդի Թառոյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղարդ համայնքի ղեկավար՝ Սանասար Երվանդի Թառոյանին 2019թվականի հունվարի 8-ից տրամադրել ամենամյա արձակուրդ՝ 20 օր և լրացուցիչ՝ 4 օր տևողությամբ:

2.Հանմայնքի ղեկավարի պարտականությունները դնել Գեղարդի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Անուշ Նազարյանի վրա:

3.Սանասար Երվանդի Թառոյանին աշխատանքի մեջ համարել 2019թվականի փետրվարի 11-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՆԱՍԱՐ ԹԱՌՈՅԱՆ

2019 թ.
գ.Գեղարդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

ՀայաստանիՀանրապետության ԿոտայքիմարզիԳեղարդհամայնք
ՀՀ, Կոտայքիմարզ, գ.Գեղարդ, 077-70-84-06, geghard.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

21 հունվարի 2019 թվականի N 2 -Ա

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հրավիրել 2019թվականի հունվարի 29-ին ժամը 11:00-ին՝ ավագանու հերթական 1-ին նիստ՝ հետևյալ օրակարգային հարցերով.

1. Գեղարդ համայնքի ղեկավարի հաղորդումը 2018 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարման մասին:
2. Համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:
3. Համայնքի կամավոր խնդիրների կարգը 2019թվականի համար սահմանելու մասին:
4. Գեղարդ համայնքի ավագանու 2018թվականի դեկտեմբերի 21-ի N 51-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՆԱՍԱՐ ԹԱՌՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղարդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղարդ, 077-70-84-06, geghard.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 փետրվարի 2019 թվականի N 3-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի, 84-րդ հոդվածի 2-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 17-ի N 18-Ն որոշումը, որոշում եմ.

1. Գեղարդ համայնքի 2018 թվականի բյուջեի տարեկան հաշվետվության և համայնքի ղեկավարի 2018 թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկումներ:
2. Հաստատել Գեղարդ համայնքի 2018 թվականի բյուջեի տարեկան հաշվետվության և համայնքի ղեկավարի 2018 թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը՝ համաձայն հավելվածի:
3.Հանրային քննարկումների ընթացքում իրականացվող բաց լսումների անցկացումը հանձնարարել Գեղարդ համայնքի ղեկավարին կից «Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման» խորհրդակցական մարմնի անդամ Մարգար Մանուկյանին :
4.Հանձնարարել աշխատակազմի առաջատար մասնագետ Սասուն Տեր-Ղազարյանին՝ համայնքապետարանի ինտերնետային կայքում և համայնքի տեղեկատվական կառավարման համակարգում տեղադրել Գեղարդ համայնքի բյուջեի նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը, ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում և այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի բնակիչներին՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար:
5.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Սասուն Տեր-Ղազարյանի վրա:
6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Անուշ Նազարյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՆԱՍԱՐ ԹԱՌՈՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՎԵՐ

Սույնով Գեղարդի համայնքապետարանի բակում հրավիրվում է բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնակցելու 2019 թվականի փետրվարի 21-ին կազմակերպվող Գեղարդ համայնքի 2018 թվականի բյուջեի տարեկան հաշվետվության և համայնքի ղեկավարի 2018 թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումներին:

Շահագրգիռ անձինք համայնքի պաշտոնական համացանցային կայքում հրապարկված Գեղարդ համայնքի 2018 թվականի բյուջեի տարեկան հաշվեռվության և համայնքի ղեկավարի 2018 թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ կարող են մինչև 2019 թվականի փետրվարի 21-ը ներառյալ ներկայացնել իրենց առաջարկություններն ու դիտողությունները, որոնք կարող են թողնել համացանցային կայքում (www.geghard.am) կամ ուղարկել համապատասխան էլեկտրոնային հասցեով (geghard.kotayq@mta.gov.am), ինչպես նաև կարող են գրավոր ներկայացնել Գեղարդի համայնքապետարան:

Հանրային քննարկումների բաց լսումները տեղի կունենան՝

Գեղարդի համայնքապետարանի բակում՝ 2019 թվականի փետրվարի 19-ին ժամը 16:00-ին, հասցեն՝ գյուղ Գեղարդ, 3-րդ փողոց թիվ 2:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել 077-70-84-06 հեռախոսահամարով: